ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5679-Ա « 23 » նոյեմբերի 2026թ.

ՄԵԾԱՐԵՆՑԻ, ԳԱԳԱՐԻՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԱՆԳՎԻ ՋՐԱՆՑՔԻ ՄԻՋԵՎ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել Ռուստամ և Լյուդվիկ Ստեփանյանների, Հռիփսիմե Ստեփանյանի լ/ա և իրավատեր Թամարա Ստեփանյանի դիմումը՝ Մեծարենցի, Գագարինի փողոցների և Զանգվի ջրանցքի միջև ընկած հողամասն (տնամերձ) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերով Ռուստամ, Հռիփսիմե, Թամարա և Լյուդվիկ Ստեփանյաններին և ըստ կտակի ժառանգության իրավունքի /լրացուցիչ/ Թամարա Ստեփանյանին փոխանցված հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին, ՀՀ Երևան քաղաքի ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 16.03.1995թ. հ.11/129 որոշումը /որտեղ նշված է, որ տնամերձ-հողամասը հատկացվել է Հարազատ Ղևոնդի Ստեփանյանին (ցուցակ հ.14)/, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից տրված 20.12.2023թ. հ.16190 տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 16.10.2024թ. հ.հ.35977, 35978, 35979, 35980 և ըստ կտակի ժառանգության իրավունքի 18.10.2024թ. հ.6206 վկայագրերը, ինչպես նաև Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի 2026 թվականի հունվարի 30-ի հ.26/10875-26 տեղեկանքը:

Տարածքի տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ քննարկվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 360.0քմ, որն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 7-րդ գոտում /հողամասի ծածկագիրն է 01-007-0299-0011/:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության № Դ-64054-25 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Մեծարենցի, Գագարինի փողոցների և Զանգվի ջրանցքի միջև ընկած, Ռուստամ, Հռիփսիմե, Թամարա և Լյուդվիկ Ստեփանյաններին փոխանցված հողամասի (տնամերձ) սահմանները որոշվում են 360.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշման համաձայն՝ Մեծարենցի, Գագարինի փողոցների և Զանգվի ջրանցքի միջև ընկած հողամասի /ծածկագիր՝ 01-007-0299-0011/ նպատակային նշանակությունը սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ բնակելի կառուցապատման:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ